

Պ Ի Ո Ս Ժ Բ. Պ Ա Պ

Տարւոյս Հոկտ. ամսոյ ճին իր յարիւնական հանգիստը մտաւ Հռովմէական եկեղեցւոյ հոգևոր պետը, Պիոս ԺԲ. Պապը, 82 տարիներու հասուն տարիքի մէջ: Իր մահը արդիւնք էր իջուածքի եւ տեղի ունեցաւ իր ամառանոցին մէջ:

Պիոս ԺԲ. ծնած է 1876ին Հռովմի մէջ եւ անուանուած՝ Էուճենիօ Բաչելլի: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած՝ 1899ին, եւ մտած՝ Վատիկանի Քարտուղարութեան սպասարկութեան մէջ: Առաջին Մեծ Պատերազմի տարիներուն նշանակուած է Պապական Նուիրակ Պավարիոյ եւ ապա՝ համայն Կերմանիոյ: 1917ին եպիսկոպոսացած է: 1929ին կը բարձրանայ կարտինալական աստիճանին եւ կը նշանակուի Վատիկանի Պետականի Պետական Քարտուղար: Իսկ 1939ին կ'ընտրուի Պապ, յաջորդելով Պիոս ԺԱ.ին իբրեւ Հռովմէական եկեղեցիի 261րդ Քահանայապետը:

Կրթիթ է 20 տարիներու իր պաշտօնավարութիւնը հանդիպեցաւ մեր աշխարհի ամենէն տազնապալի շրջաններէն մէկուն: Աթոռ բարձրացած էր Բ. Համաշխարհային Պատերազմի նախօրեակին: Պատերազմի ընթացքին, բայց մանաւանդ անկէ վերջ, Հռովմէական եկեղեցին Կեղրոնական ու Արեւելեան Եւրոպայի մէջ անցուց, եւ կը շարունակէ անցնել, տազնապի լուրջ շրջան մը, իբրեւ ճեռեանք Համայնավարական վարչածնի տիրապետման այդ երկիրներու մէջ: Հռովմէական եկեղեցիի պատմութեան մէջ իր անունը յատկապէս պիտի յիշուի իբրեւ այն Պապը՝ որ Ս. Կոյսի մարմնապէս վերափոխումը անցուց Հռովմէական եկեղեցիի դաւանական հաւատալից շարքին մէջ: Եղած է համեմատարար լայնամիտ Պապ մը, շարունակաբար շեշտելով որ պայքար չկայ եւ չի կրնար ըլլալ ճշմարիտ գիտութեան եւ կրօնքի միջեւ, մինչեւ իսկ ընդունեց որ եղաշրջման գիտական տեսութիւնը անհաշտելի չէր եկեղեցիի ուսուցմանց հետ: Լիովին օգտագործած է գիտական բոլոր դիւրութիւնները (ռատիօ, թելեվիզըն, եւայլն) եւ տեսութիւնները եկեղեցւոյ օգտին համար: Իր հօտէն ճանչուած է նաեւ իբրեւ սրբակենցաղ Պապերէն մէկը:

Իր օրով կարտինալական շրջանակը զգալապէս ընդլայնուեցաւ իր մէջ առնելով գրեթէ ամէն ազգէ կամ աշխարհագրական մեծ շրջանակներէն կարտինալներ, որով սկիզբ դրուած եղաւ Հռովմէական եկեղեցիի բարձրագոյն այս կարգը իտալական մենաշնորհ մը ըլլալէ ազատագրելու: Ճանչցուած է առհասարակ խաղաղասէր, բայց միաժամանակ կոտորի եւ խոհական Քահանայապետ մը:

Եղած է մեծ ուսումնական, դիւանագէտ ու լեզուագէտ հոգևորական մը: Բացի իտալերէնէն գիտէր լատիներէն, ֆրանսերէն, անգլերէն, սպաներէն, բորթուկալերէն եւ գերմաներէն: Թաղուեցաւ Ս. Պետրոսի ներքնայարկին մէջ, ուր թաղուած են պապերէն մեծ մասը:

ՍԻՈՆ, իր վշտին մէջ, ցաւակցութեան բաժինը կը բերէ Հռովմէական եկեղեցիի մեծ սուգին:

\* \* \*

Ս. Աթոռոյ Գործոց Ընդհ. Վարիչ Կեր. Տ. Սուրէն Եպս., Հոկտ. 9ին, վշտակցական հեռագիր զարկաւ Վատիկան Ոստան, Պիոս ԺԲ. Պապի մահուան առթիւ, որուն ի պատասխան ստացուեցաւ Վատիկանէն հետեւեալ հեռագիրը:

«Կարտինալներու Սրբազան Ժողովը կը հրահանգէ ինձի արտայայտել իրենց անկեղծ գնահատանքը եւ երախտագիտութիւնը, վշտակցութեան այն անկեղծ պատգամին համար՝ զոր զրկած է իր Կերպոյն Քահանայապետ Պիոս ԺԲ. ի մահուան առթիւ»:

Կարտինալ ԱԼՕԵԶԻ ՄԷՍԷԼԼԵ

\* \* \*

Վերջին պահուն կիմանանք որ նոր Պապ ընտրուած է Վենետիկի Պատրիարք Կարտինալ Անճելօ Ռոնգալլի (Իտալացի) եւ առած է Յովհաննէս ԻԿ. անունը: ՍԻՈՆ կը մաղթէ Քրիստոնէական եկեղեցւոյ մեծագոյն հատուածի Հովուապետին խաղաղասէր եւ արդիւնաշատ պաշտօնավարութիւն:



**Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ԻԻԹԻՃԵԱՆ**  
**1889 — 1958**

Տարույս Յոսիս ամսոյ 29ին ի Տէր հանգուցեալ է Աւստրիոյ եւ Գերմանիոյ Հայոց Հոգեւոր Հովիւ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Իւթիսեան :

Հանգուցեալ Եղիշէ Ծ. Վրդ. ծնած է 1889ին, Կ. Պոլսոյ մէջ : Իր նախնական ուսումը ստացած է Սկիւտարի Երմոնեան դպրոցին մէջ եւ շրջանաւարտ ելած է Գաւորգիոյի Արամեան վարժարանէն : Երկօր տարիներ ուսուցչական պաշտօն վարած է Կ. Պոլսոյ հայկական վարժարաններու մէջ մինչեւ 1928 եւ սոյն թուականին քահանայ ձեռնադրուած է Նիկոմիդիոյ նախկին եւ նոյն շրջանի Պուլկարիոյ առաջնորդ Տ. Ստեփանոս Արքեպս. Յովակիմեանէ, Առֆիայի մէջ :

1929ին նշանակուած է Վիեննայի Հայոց Հոգեւոր Հովիւ, պաշտօն մը՝ զոր վարած է մեծ նուիրուածութեամբ : 1944ին իր կրօնակիցը կորսնցուցած ըլլալով, Տ. Արտաւազդ Արքեպս. Սիրմէեանէն ստացած է Վեդար եւ վարդապետական մասնաւոր իշխա-

նութիւն : Իր բազմամեայ եկեղեցանուէր եւ արդիւնաւէտ ծառայութեան համար 1952ին Տ. Խաղ Արքեպս. Աջապահեանէն ստացած է Ծայրագոյն Վարդապետի աստիճան, Փորիզի Հայոց Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մէջ :

Հանգուցեալ Հայր Աւերբը լանջախաչ ստացած է Երանաշնորհ Տ. Խորէն Կաթողիկոսէն : Ան ժամանակ մը եղած է նաեւ Պուտաբըշտի Հայոց Հոգեւոր Հովիւ :

Հանգուցեալ Եղիշէ Ծ. Վրդ. իր տարիներու անդուլ ծառայութեամբ ցուցաբերած է բարի հովիւի, գիտակից պաշտօնէի, առաքինի քրիստոնեայի եւ ազգին ու եկեղեցիին նուիրուած հայ եկեղեցականի մը արժանիքները :

Յուզարկաւորութիւնը եւ թաղումը տեղի ունեցած է Օգոստոս 2ին եւ մարմինը ամփոփուած է ընտանեկան դամբարանին մէջ :

Ընկալցի Տէր Յիսուս զնոզի նորա ի լոյս երեսաց իւրոց :

Տիկին Շուշան Կեօվեան՝ կը նուիր. 500 Բիլս, վտան բարգաւանման Մրբոց Յակոբեանց Տպարանից :

## 1958-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

### ՅՆՈՒՍԱՊԻՃԵՆ

Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Գըպրըրիան՝

Արժ. Տ. Նարեկ ՔՏՆՅ. Շրիփեանին (Այն-  
[ճար] :

Բարեչ. Վարդան Արկ. Զաքարեան՝

Տիար Յակոբ Զաքարեանին (Պէշքուլթ) :

### ՈՒՍՐԵՐԱՈՒՆԵՆ

Արժ. Տ. Արաշն ՔՏՆՅ. Աշճեան՝

Տիկին Աննա Թիւրէքեանին (Պրուքլին) :

Տիար Յակոբ Յարութեանին (Ֆրէզիո) :